

Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

a r a v o t d a i l y

Aravot Daily

37/4133/ 29 փետրվարի 2012 չորեքշաբթի

ISSN 1829-2224



1 2 0 2 5

9 771829 222003

Փոխել խափանման միջոցը

Հայաստանյան ԶԼՄ-ների ղեկավարները դիմում են ՀՀ զխափոր դատախազ Աղվան Հովսեփյանին հետևյալ նամակով. «Մեր գործընկեր Տիգրան Հակոբյանը գտնվում է անազատության մեջ՝ նրա դեմ մեղադրանք է առաջադրված: Չքննարկելով այդ մեղադրանքի տվյալները՝ Ձեր ուշադրությունն ենք դարձնում, որ Տիգրան Հակոբյանը մեր լրատվական դաշտի աչքի ընկնող դեմքերից մեկն է՝ ղեկավարել է «Ռեսուրսիկա Արմենի» և «Հայք» թերթերը, Հեռուստառադիոկայանները և «Արմենիոն» գործակալությունը: Տեղեկացնում ենք, որ նա առողջական խնդիրներ ունի՝ մասնավորապես, երկու անգամ սրտի վիրահատություն է տարել, և այժմ էլ նրա առողջական վիճակը մտահոգիչ է: Վստահ ենք նաեւ, որ նա, ազատության մեջ գտնվելով, որեւէ մտադրություն, ինչդեպ նաեւ հնարավորություն չի ունենա ազդելու քննության ընթացքի վրա: Այդ ամենը հաշվի առնելով՝ կոչ ենք անում Ձեզ փոխել նրա խափանման միջոցը՝ այն փոխարինելով հանրադատությանը չբացակայելու ստորագրությամբ»:

Հակոբ Ավետիսյան՝
«Ազգ» թերթի զխափոր խմբագիր
Բագրատ Եսայան՝
«Երկիր» թերթի զխափոր խմբագիր
Գագիկ Մկրտչյան՝
«Հայոց աշխարհ» թերթի զխափոր խմբագիր
Ծողեր Մայրետոյան՝
«Հորորորդ ինքնիշխանություն» թերթի զխափոր խմբագիր
Սարգիս Սեյրանյան՝
«168 ժամ» թերթի զխափոր խմբագիր
Նիկոլ Փաշինյան՝
«Հայկական ժամանակ» թերթի զխափոր խմբագիր
Արման Բաբաջանյան՝
«1.am» կայքի և «Ժամանակ» թերթի սեփականատեր
Արմինե Օհանյան՝
«Հրապարակ» թերթի զխափոր խմբագիր
Էդիկ Բաղդասարյան՝
«Հետք» թերթի զխափոր խմբագիր
Վարդան Ալոյան՝
«TV մոլ» թերթի զխափոր խմբագիր
Արամ Աբրահամյան՝
«Առավոտ» թերթի զխափոր խմբագիր
Սամվել Մայրաթոյան՝
«h2» հեռուստաընկերության սեփականատեր
Արտակ Ալեքսանյան՝
«Արմենյուզ» հեռուստաընկերության տնօրեն
Գեղամ Մանուկյան՝
«Երկիր մեդիա» հեռուստաընկերության լրատվական ծրագրերի տնօրեն
Մեսրոպ Մովսեսյան՝
«Ա1 +» հեռուստաընկերության տնօրեն
Ադաի Հունանյան՝
«Զանթ» հեռուստաընկերության լրատվական ծրագրերի տնօրեն
Պետրոս Ղազարյան՝
«Կենտրոն» հեռուստաընկերության լրատվական ծրագրերի տնօրեն
Հայկազն Ղաիրյան՝
«Լրագիր» կայքի զխափոր խմբագիր
Արտակ Բշտիկյան՝
«mardik.am» կայքի զխափոր խմբագիր
Կարեն Զախարյան՝
«Դե ֆակտո» լրատվական գործակալության տնօրեն
Արգիշտի Կիվիրյան՝
«Armtoday» կայքի խմբագիր
Նուրե Սարգսյան՝
«Ինտերմյուս» հ/կ գործադիր տնօրեն
Բորիս Նավասարդյան՝
Երեւանի մանուկի ակումբի նախագահ
Աշոտ Մելիքյան՝
Խոսքի ազատության կոմիտեի նախագահ

ՀՀԿ-ի ավտոմեքենաներն անձեռնմխելի՞ են



Երեկ, երբ ԱԺ-ում քննարկվում էր 100 տոկոսանոց համաձայնական ընտրակարգի անցնելու հարցը, ԱԺ Բաղրամյանի մուտքի մոտ բողոքի ակցիա էին անում խորհրդարանական և արտախորհրդարանական ուժերը: Հենց այդ ժամանակ ֆոտոլրագրող Գագիկ Ծանձյանի ֆոտոխցիկը ֆիքսեց, որ «Մերսեդես G500» մակնիշի 005 00 05 և մեկ այլ մակնիշի 029 00 11 համարանիշներով ավտոմեքենաների վարորդները երթեկելում էին առանց ամրագրու, իսկ ավտոմեքենաների դիմադրական բացակայում էին ԱԴԴԱ և տեխնոլոգիական կտրոնները: Երբ ֆոտոլրագրողը լուսանկարում էր Եվան ավտոմեքենաները, «Մերսեդես G500»-ի մեջ նստած անձինք նեղարտեցին. «Հզիտե՛ս՝ ում ավտոներն են, խի՞ են նկարում»: Որից հետո Ծանձյանին մոտեցավ մի տղամարդ և մանրամասնեց, թե ում ավտոմեքենան է. «Դու ի՞նչ իրավունք ունես նկարես, ես ավտոների շեֆերը հանրադատականներ են»: Տեսնելով, որ չի կարողանում համոզել, ձեռքի ծխախոտը նետեց Ծանձյանի ուղղությամբ և հայիտեց: Նրա ագրեսիան կարողացան սանձել այնտեղ գտնվող ոստիկաններն ու քաղաքացիները: Ավելի ուշ տարգվեց, որ 029 00 11 համարանիշը գրանցված է ԱԺ ավտոնստեղծության բալանսում և տրասպարկում է ԱԺ դատադամավոր, ՀՀԿ-ական Արկարի Համբարձումյանին: Իսկ «Մերսեդես G500»-ը գրանցված է Արմավիրի մարզում՝ «Տնաշին-Աշոտ» ՍՊԸ-ի բալանսում: Տեղեկացանք, որ այդ ավտոմեքենան էլ դատականում է արմավիրցի ՀՀԿ-ական դատադամավոր Նահապետ Գևորգյանին:

Լուսանկարները՝ ԳԱԳԻԿ ԾԱՍՅԱՆԻ

ՍՈՒՐՅԱՆԴԱԿ

Ոչ միայն կկատեցնենք, այլև ետ կձողենք

«Պատերազմը վերսկսվելու դեպքում մեր երկրի տաշտոյանության բանակը շատ կարճ ժամանակում ի վիճակի է ոչ միայն կատեցնել թշնամու գրոհը, այլև այն տեղափոխել իր իսկ տարածք և ելքը վճռել այնպես, ինչպես եղավ 1994-ի մայիսին»,- «Առավոտի» հետ զրույցում ասաց ԼԴՀ Ազգային ժողովի փոխնախագահ Արթուր Թովմասյանը:

Կարդացեք էջ 2:

Ցուցակի վերաբերյալ քննարկումները շարունակվում են

Երեկ տեղի է ունեցել Հայ ազգային կոնգրեսի քաղաքական, կենտրոնական գրասենյակի և տարածքային կառույցների համատեղ խորհրդակցություն, որը վարել է ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Խորհրդակցության ընթացքում քննարկվել է Հայ ազգային կոնգրեսի համաձայնական ցուցակի կազմման խնդիրը:

Առողջության առաջնություն
Որտե՞ղ և ինչպե՞ս առաջնությունը ձեր
առողջությունը: Այս և բոլոր այլ հարցերին՝
սոցիալական փաթեթի մասին, կդատասխանեն

59-21-21

հեռախոսահամարով:

«ԻԼԳՈ ԱՐՄԵՆԻԱ» առաջնությունը ընկերություն

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Քննարկում

Այսօր, ժամը 13-ին, «Հայացք» մանուկի ակումբի հյուրընկերություն է թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը:

Եղանակ

Երեւան - 5 + 7,
Երևան - 12 + 1,
Կոտայք - 12 + 1,
Գեղարքունիք - 12 + 1, Լոռի - 10 + 6, Տավուշ - 5 + 12, Արագածոտն լեռներ - 12 + 1, Արագածոտն նախալեռներ - 7 + 8, Արարատ - 6 + 10, Արմավիր - 6 + 10, Վայոց ձոր լեռներ - 12 + 1, Վայոց ձոր նախալեռներ - 6 + 10, Սյունիքի հովիտներ - 5 + 12, Սյունիքի նախալեռներ - 8 + 7, Արցախ - 3 + 7

Հայրենի խորհրդարանը երեկ քննարկեց երկու կարեւորագույն օրինագծեր՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում» և «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքներում լրացում կատարելու մասին օրինագծերը, որոնք մեկ փայտեթուղ քննարկվելու են ՀՀ կառավարությունը, ու նաեւ ՀՀ-ն և «Ժառանգություն» խմբակցությունների նախաձեռնությամբ, որոնք հրատարակարգ, օրակարգ մտած «ՀՀ ընտրական օրենսգրքում», «ԱԺ կանոնակարգ», նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենսդրական փայտեթուղ: Այս երկու փայտեթուղը, ըստ ելույթան, մեկը մյուսի տրամաբանական շարունակությունն էին եթե ոչ իրավական, առաջ՝ քաղաքական հարթությունում: Ի դեպ, դրա մասին իր ելույթներից մեկում ավելի ուշ ակնարկեց նաեւ ՀՀ-ի խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանը:

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագծի քննարկումը մեկնարկել էր դեռ երկուշաբթի օրը, բայց երեկ էլ օրենսդիրները բուռն բանավիճում էին դրա սահմանադրական լինելու և ընդհանրապես կառավարության կողմից քննարկված տեսքով ընդունելու նպատակահարմարության շուրջ: Հիշեցնենք, որ օրինագծի ամենավիճահարույց դրույթը վերաբերում է բանակի զինումն ու ռեսուրսները ներքաղաքական գործընթացներին ներգրավելուն: Ի դեպ, օրինագծի մի շարք դրույթներ հակասահմանադրական գնահատեցին ոչ միայն խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչները, այլև անկախ լրատվամիջոցները: Տեղի ունեցող իրադրությունները, որի դիտարկմամբ՝ «Իսլամական կամ հանրային միջոցառումներ իրականացնելու սահմանափակումը կամ արգելումը չի կարող իրականացվել Ձիզված ուժերի միջոցով»: 2008թ. «մարտիմեկյան» դեպքերի և

ԱԺ-ում օրենսդրական փայտեթուղների կոիվ էր

Դրանցից մեկը քննարկվեց երկուշաբթի էր իշխանությունը, մյուսը՝ ընդդիմությունը: Երկուսի քննարկումների եզրահանգումն էլ, ըստ ելույթան, այն էր, որ իշխանություններն ուզում են վերադարձնել:



հատկապես 4 տարի առաջ երկրում արտակարգ դրություն մտցնելու Ռոբերտ Քոչարյանի նախաձեռնությունը կրծքով տաշտողան, այն ժամանակ դեռ ԱԺ նախագահ, Տ. Թորոսյանի այս ելույթը հարուցեց «Ժառանգության» տատանակները: Այսուհանդերձ, նրա ելույթի հիմնական առանցքն այն էր, որ այս օրինագիծը ուղղակի կառուցում էր ԱԺ առաջիկա ընտրությունների հետ: Նա հիշեցրեց մարտիմեկյան դեպքերի ժամանակ բանակի ներգրավվածությունը, եւ, որոնք այդ իրադարձությունների մասնակից, հայտարարեց, որ եթե այս օրենքը գործեր 4 տարի առաջ, միեւնույն է՝ ոչինչ չէր փոխվի: «Ոչինչ էլ այս օրենքը չի լավացնելու, եթե իշխանությունները փորձեն մեկ անգամ էլ կրկնել «Մարտի 1»-ը:

Ձիզված ուժերը էլի մտնելու են՝ ինչո՞ւ են մտնում, ՁԼԲ-ները փակվելու են՝ ինչո՞ւ փակվեցին, լինելու է մի դժոխային վիճակ, Աստված մի արասցե՝ լինելու է մարդաստանություն, եւ այս օրենքը չի օգնելու, որոնքսզի «մարտիմեկյան» չկրկնվեն»: Պատգամավորը մեջբերեց Դ. Հարությունյանի այն հայտարարությունը, թե՛ օրինագծի 24-ժամյա ռեժիմով քննարկումը տաշտանակորված է մոտեցող ընտրություններով: «Այս օրենքը շատ վատ նախաձեռն, հուշում է, մանավանդ, երբ կարդում են դրա ակնկալվող արդյունքը՝ «ակնկալվում է հստակ նախատեսել այս հասկացությունը՝ նախատեսելով, որ արտակարգ դրությունը հայտարարվում է միայն այն հանգամանքների առկայության դեպքում, երբ հանրադատությունում սահմանադրական

կարգին անմիջական վտանգ է սղառնում, ներառյալ՝ սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տառապելու, իշխանությունը գրավելու փորձը, զինված խռովությունները, զանգվածային անկարգությունները»: Ինչո՞ւ ոչինչ լինե՞ն այս երեւոյթները մեր երկրում, ինչո՞ւ ենք տատանվում այս անկարգություններին, եթե իշխանությունն իր տեղում է, եթե իշխանությունն աղաւիտում է մեր քաղաքացիների արդար իրավունքները, բոլորի համար հավասարադատ կիրառում է օրենքները, ինչո՞ւ ենք տատանվում այս խռովություններին, զանգվածային անկարգություններին: Իշխանությունը փոխանակ այս օրինագիծը բերելու և տատանվելու ընտրություններին՝ թող տատանվու ընտրություններին, այն իմաստով, որ աղաւիտի մեր քաղաքացիների շրջովելու ցանկությունը», - հավելեց Անահիտ Բախշյանը: «Ժառանգություն» և ՀՀ-ի խմբակցությունները հայտարարեցին, թե դե՛ն են այս օրինագիծն, իսկ ՀՀ-ի ներկայացուցիչն էլ անընդունելի համարելով օրինագծի ընդունումը՝ խոստացավ փոփոխությունների փայտեթուղ քննարկումը: Առաջ խորհրդարանն անցավ ԱԺ 100 տոկոսանոց համահասնական ընտրակարգին անցնելու վերաբերյալ օրենսդրական փայտեթուղ քննարկմանը, որի գլխավոր զեկուցողը «Ժառանգության» ներկայացուցիչ Արմեն Սարտիրոսյանն էր: Այս քննարկումների ընթացքում ուշագրավ էր օրինագծի հարակից զեկուցող, ԱԺ ղեկավարական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանի ելույթի այն

հատվածը, որտեղ վերջինս որոնե մեծամասնական համակարգի առավելությունը՝ շեշտեց, թե «ամենակարեւոր փաստարկն այն է, որ մեծամասնական ընտրությունների արդյունքում, որոնք կանոն, հաղթում են այն անմիջապէս, որքան ներկայացնում են ձեւավորվող իշխող կուսակցությունը: Բնականաբար, մեծամասնական մոդելը հնարավորություն է ստեղծելու կայուն մեծամասնություն խորհրդարանում»:

ՀՀ-ի խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանն իր խոսքում արձագանքելով սրան՝ ասաց, թե դա ինքնախոստովանություն է: «Երբեւէ առանց արդյունաւի բախումների իշխանություն չի փոխվում, եւ ձեր հայտարարությունները, թե՛ մի օր էլ դուք իշխանություն կդառնաք [իր ելույթում ընդդիմախոսներից ուղղված նաեւ այդդիմի հայտարարություն էր արել Դավիթ Հարությունյանը-խմբ.], այն օղորայից է, որը ղեկը չէ այստեղ հնչեցնել», - ասաց ՀՀ-ի խմբակցության ղեկավարը՝ հավելելով, թե շատ կասկածում է, որ անգամ մեծամասնական ընտրակարգը կարող է աղաւիտել իշխանության կայունությունը, «որովհետեւ եթե մեծամասնական ընտրակարգով այդ կայունությունն աղաւիտելիք՝ նախորդ օրենքը չէր բերվի»: Ակնարկը վերաբերում էր «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագծին:

Ի դեպ, ԱԺ 100 տոկոսանոց համահասնական ընտրակարգին անցնելու օրենսդրական փայտեթուղ քննարկումն է դրվելու այսօր: Հիշեցնենք, որ օրինագիծն, բնականաբար, «կողմ» են քվեարկելու ՀՀ-ն և «Ժառանգություն» խմբակցությունները, ՀՀ-ն և ՕԵԿ-ը՝ դե՛ն, իսկ ահա ԲՀ-ն, որտեղ տեսակետները տարբեր են, կքվեարկի ազատ ռեժիմով, ինչո՞ւ են խմբակցության ղեկավար Գագիկ Մառուկյանն եր առաջարկել՝ յուրաքանչյուրն իր խղճի մոտք:

ՆԱԻԲԱ ՄԱՍԻՎՈՆՅԱՆ

ՄԵԿ ԼՈՒՐ

ԲՀ-ականը համաձայն չէր ՀՀ-ականի հետ

Երեկ խորհրդարանում ԱԺ 100 տոկոսանոց համահասնական ընտրակարգին անցնելու օրենսդրական փայտեթուղ քննարկման ժամանակ օրինագծի հարակից զեկուցող, ղեկավարական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանը, տաշտողանելով մեծամասնական ընտրակարգի գոյությունը, հայտարարեց, թե՛ «ամենակարեւոր փաստարկն այն է, որ մեծամասնական ընտրությունների արդյունքում, որոնք կանոն, հաղթում են այն անմիջապէս, որքան ներկայացնում են ձեւավորվող իշխող կուսակցությունը: Բնականաբար, մեծամասնական մոդելը հնարավորություն է ստեղծելու կայուն մեծամասնություն խորհրդարանում»: Սրան իր ելույթում արձագանքեց ԲՀ-ի խմբակցության տատանակոր Նաիրա Ձոհրաբյանը. «Համաձայն չեն իմ գործընկերոջ հետ, թե կայուն մեծամասնություն ունենալու համար մեծամասնական ընտրակարգը ոչ թե թերություն է, այլ բնորոշիչ: Ոչ: Եթե մեծամասնությունն ուզում է ունենալ կայուն մեծամասնություն հատկապես մեծամասնական 41 ընտրատարածքները անեն գնով տախտանելու ճանադարհով, առաջ դա ոչ բնորոշիչ է, այլ թերություն, որովհետեւ կայուն մեծամասնություն տախտանելու միակ ճանադարհը ղեկը է լինե՞ն ազատ եւ արդար ընտրությունները»:

Թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանը հիասթափված է ու շուկի մեջ՝ Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի որոշումից: Երեկ Սահմանադրական խորհուրդը հակասահմանադրական ճանաչեց ցեղատարությունների միատունը քրեականացնող օրինագիծը:

Aravot.am-ի հետ զրույցում թուրքագետն ասաց, որ չի ցանկանում մտածել, թե այս տարվա հունվարին Սեմստի կողմից ընդունված օրինագիծը Ֆրանսիայի իշխանությունների կողմից նախատեսված քայլ էր ու զուտ սղառնալիք Թուրքիային. «Ուզում են հավատալ, որ իսկապես մարդիկ, որոնք քվեարկել էին հանուն արդարության»՝ հանդգնած էին, որ այդ օրինագիծը կանցնի, տարգարես թուրքական ճնշումներն ու փոխաբերական իմաստով՝ կաշառքներն ավելի ազդեցիկ էին: Դիտելով Սարկոզի անցած ուղին ու գնահատելով նրան որոնք լավ ղեկավար գործիչ՝ չեն ուզում մտածել, որ նախատարաստված սցենար էին գրել: Նա Ֆրանսիական հասարակության համար օտար քաղաքական գործիչ է, համենայնդեպ, հոգով ու սրտով իր ցավում այս օրինագծի համար»:

Հայաստանի համար օրինագծի անկանխատեսելի ընթացքը, տարոն Սաֆրաստյանի կարծիքով, Թուրքիայի սղառնալիքների արդյունք է: Նրա խոսքերով՝ Թուրքիային հաջողվեց ստեղծել վախի մթ

Թուրքիային հաջողվեց ստեղծել վախի մթնոլորտ

Ասում է թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանը



նոլորտ. «Քանի՛ սեմատորների զանգերով ու ցանակներով սղառնացին: Մի՞նչէն անգամ օրինագծի հեղինակ՝ կին սեմատորին էին սղառնացել: Թուրքական դիվանագիտության բոլոր հնարքները մեզ վաղուց արդեն ծանոթ են»: Թուրքագետի կարծիքով՝ եթե Սարկոզին վերընտրվի որոնք նախագահ, ինքը հաստատ կդաի իր խոստումը եւ նոր օրենսդրական նախաձեռնությամբ հանդես կգա, իսկ եթե

չվերընտրվի, հնարավոր է, որ այս օրինագիծը մոռացվի. «Համենայնդեպ, այս ղաիին դժվար է կանխատեսել, թե ինչ ընթացք կստանա մերված օրինագիծը»: Պարոն Սաֆրաստյանը խորհուրդ տվեց վերանալ իրադարձություններից ու սաղը դատել. «Ցավոք, Հայոց ցեղատարության ճանաչումը դարձել է քաղաքական տախտանի թատերաբեմ: Ու եթե կա քաղաքական տախտան, ուրեմն կա նաեւ տարտություն: Մեզ

մնում է շարունակել տախտանը ու նպատակաւաց գնալ Հայոց ցեղատարության ճանաչմանը»:

ԱՐԺԻՆԵ ՄԻՍՈՆՅԱՆ

Հ. Գ. Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի կողմից Հայոց ցեղատարության միտման համար քրեական տախտան սահմանող օրինագծի՝ հակասահմանադրական ճանաչելուց հետո երկրի նախագահ Նիկոլա Սարկոզին կարգադրել է կառավարությանը համանման նոր օրինագիծ մշակել: Ինչո՞ւ են հաղորդում է «Ազատություն» ո/կ-ն՝ վկայակոչելով BBC-ն, Ֆրանսիայի նախագահի գրասենյակը հայտարարությամբ է հանդես եկել, որում ցշելով օրինագծի աջակիցների «մեծ հիասթափությունը եւ խորը տխրությունը»՝ հայտարարել է. «Հանրադատության նախագահը համարում է, որ [ցեղատարության] ուրացումը անհանդուրժելի է եւ հետեւաբար ղեկը է տատկվի: Նա խնդրել է կառավարությանը տատրաստել նոր օրինագիծ՝ հաշվի առնելով Սահմանադրական խորհրդի որոշումը»:

12 հազար դրամը նականադրական էր

Սահականուշ Գրիգորյանն այդքան գումարով «հարստացել» է, ինչի համար
դեղատոմսերը նրան աղքատ նյութատարողների ցուցակից հանել է:



Բակի այս ծորակից տարիներով ջուր չի գալիս:



Միջանցքի փոքր անկյունը
ծառայում է նաև որդես խոհանոց:

«Սա տան միակ սենյակն է:
«Փարոս» բոլոր փաստաթղթերով,
ինձ տատնառաքանցեցին, որ անց-
յալ տարի աշխատել եմ ու եկա-
մուտ եմ ստացել, դրա համար
նյութատարողների ցուցակից հանել է:
Նրա տատնելով՝ «Այս տարվա
հունվարին, Մոսկվայի հատկացու-
մը շարունակելու համար, դիմեցի

Տարեցտարի մեր երկրում
խստացվում են նյութատարողների ցուցակում հայտն-
վելու չափանիշները եւ չնայած
նրան, որ աղքատության ցուցա-
նիշը Հայաստանում շարունակում
է մնալ բարձր, այնուամենայնիվ,
մեր դեղատոմսերը մարդուն աղ-
քատ ճանաչելու համար, կարելի է
ասել, զարգացած երկրին բնորոշ
թաղաքականություն է վարում:
Օրինակ՝ եթե շատ աղքատների
նյութատարողների ցուցակից հա-
նում են՝ դատաւարների ցանկից,
որ ունեն ավտոմատ վագոն մեքենա,
ջրատաքացուիչ կամ թվային հե-
ռուստացույց, ապա Սահականուշ
Գրիգորյանը կենցաղային ամենա-
տարրական տայանքներ չունի եւ
12 օրվա համար 12 հազար
դրամ եկամուտ ունենալու դատ-
աւարով տարադատելու դուրս է մնա-
ցել նյութատարողների ցանկից:
Երկրում հայտնել են, որ՝ աշխա-
տում ես: Նա իր անշահախառն որ-
դու՝ Ռոբերտի հետ աղքատ է 17
թաղականի մետք բնակարանում,
որտեղ անգամ սանհանգույց, խո-
հանոց ու ջուր չկա:

Կոնդ թաղամասի 89 հասցեում
բնակվող այս ընտանիքը տարիներ-
ով գազի եւ ջրի երես չի տես-
նում: Ձմռանը, էլեկտրաէներգիան
խնայելու համար, տաքացել են
եռացրած ջրով լի դատաւարային
22երով: Տիկին Սահականուշի
դատնելով. «Շշերի մեջ ջուր էի լց-
նում տղայիս հետ, գրկում՝ բնում
էինք, աղյուցներով փաթաթելով,
որ ցուրտ չսառնեց»:

Մասնագիտությամբ մանկավարժ
Սահականուշ Գրիգորյանը դատա-
ւարատ էր նյութատարող ինքնակա-
նաւարակ, եթե հիմնական աշ-
խատանքով աղքատիկան լինէր:
Նա ոչ իր մասնագիտությամբ է
գործ գտնում, ոչ էլ մեկ այլ՝ հա-
վաքարարի կամ բանվորի աշխա-
տանք է գտնում. «Հավաքարարի
համար ասում են՝ ջահել ես, կա-
րող ա մի օր լավ գործ գտնես,
թողնես գնա, ուրիշ տեղեր էլ
ասում են՝ մեզ շատ ջահել ու բա-
րեւտեմ է դեմք»:

Տիկին Գրիգորյանը երկար տա-
րիներ, չկարողանալով աշխա-
տանք գտնել, աղքատ է աղքատու-
թյան 19 հազար դրամ նյութատա-
րող: Սակայն անցյալ տարվա
հունիսին, նրա խոսքերով ասած,
բախտը բերել է եւ ակիսե լվացողի
գործ է գտել: Սակայն ամսական

ընդամենը 12 օր է աշխատել՝ 12
հազար դրամ վարձատրությամբ:
Այդ գումարը աղքատ ընտանիքի
համար, ճիշտ է, չճշի՞ն է, բայց
նյութատարողների ցուցակից հանել
կո-
մունակ որոշ ծախսեր փակել է:
Նրա տատնելով՝ «Այս տարվա
հունվարին, Մոսկվայի հատկացու-
մը շարունակելու համար, դիմեցի

«Փարոս» բոլոր փաստաթղթերով,
ինձ տատնառաքանցեցին, որ անց-
յալ տարի աշխատել եմ ու եկա-
մուտ եմ ստացել, դրա համար
նյութատարողների ցուցակից հանել է:
Նրա տատնելով՝ «Այս տարվա
հունվարին, Մոսկվայի հատկացու-
մը շարունակելու համար, դիմեցի

Հազվադեպ հիվանդություններից ամենատարածվածը տարբերակաճ է

Պարբերական, ժողովրդի լեզվով ասած՝ երեանյան
հիվանդությունը թեւեւ ամբողջ աշխարհում դասվում է
հազվադեպ հիվանդությունների շարքին, սակայն այն
Հայաստանում շատ տարածված է: Երեկ «Նովոստի-
Արմենիա» մամուլի ակումբում հազվադեպ հիվանդու-
թյունների խնդիրների վերաբերյալ տեսականոցը եր-
կազմակերպել, որին մասնակցում էր Մոսկվան, Քիշ-
նելը, Կիեւը, Աստանան եւ Երեւանը: Բժշկական գեներ-
տիկայի եւ առողջության առաջնային դատաւարներ
կենտրոնի տնօրեն Թամարա Սարգսյանի ներկայաց-
մամբ՝ ամեն շաբաթ 60-80 նոր մարդիկ են հետազոտ-
վում իրենց կենտրոնում եւ հիմնականում՝ երեխաներ:
«Քանի որ սա գեներտիկ հիվանդություն է, մեզ դիմում են
ընտանիքներ, որտեղ հիվանդության դեղքեր են եղել:
Հետազոտվողների կեսից ավելին մոտ հաստատվում է
դատբերական հիվանդությունը: Ճիշտ է, մինչեւ 7 տա-
րեկան երեխաների հետազոտությունն ու բուժումը կա-
տարվում է դեղատոմսերի շրջանակում, բայց ընդհա-
նուր առմամբ՝ բուժումը թանկ արժեք: Բժշկի խոսքերով՝
աշխարհում գրանցված է հազվադեպ հիվանդություննե-
րի 6-7 հազար տեսակ, որոնց թվում են հեմոֆիլիան,
մտավոր հետամնացության գեներտիկական ձեւերը, ֆե-
նիլկետոնուրիան եւ այլ հիվանդություններ: Թե ինչ
տվեց տեսականոցը եւ համեմատվելով այլ երկրների
հետ՝ Հայաստանն այդ առումով ի՞նչ վիճակում է՝ մեր
հարցին Թամարա Սարգսյանն ասաց, որ ԱՊՀ երկրնե-
րի հետ նման շփումն առաջին անգամ էր, եւ բավակա-
նին տեղեկություններ ստացան. «Ես իրավունք չունեմ
ասել, թե մենք ավելի լավ վիճակում ենք հետազոտու-
թյան կամ բուժման առումով, մի քիչ համեմատություն
անեն, բայց մեք էլ մենք, որ Հայաստանում կա լուրջ
առաջընթաց»:

ՆԵՒԼԻ ԲԱԲՅԱՆ

Հայկական թիմը՝ «Բակուրիանի 2012»-ի միջազգային մրցույթի հաղթողներից մեկը

Հայաստանը ներկայացնող 8 թիմ մասնակցեց ձմեռային
դաշնային արտաճանադարիային մեքենաների վար-
ման «Բակուրիանի 2012» միջազգային մրցույթին՝ փետրվա-
րի 24-ից 26-ը: Վրացական Բակուրիանի բնակավայրում
Jeep-Trial դասի ավտոմոբիլային մրցումներն անցկացվեցին
Standart, Extreme եւ Monster անվանակարգերում:

Ընդհանուր առմամբ մրցույթին մասնակցեց 38 թիմ՝ Հա-
յաստանից, Ավստրիայից, Ադրբեջանից, Վրաստանից եւ
Թուրքիայից: Հայաստանյան թիմերը մասնակցեցին այս մր-
ցույթին երեքտեղյալ սպորտի «Ադրենալին» ասոցիացիայի եւ
«ԱրմենՏել» (ադրբեջանից Beeline) ընկերության աջակցու-
թյան շնորհիվ: Standart անվանակարգում առաջին տեղը
գրավեց Գարի Գասպարյանը, որը հանդես եկավ Mitsubishi
Pajero 3 մեքենայով: Extreme դասում լավագույն վարորդը
Հայաստանից Լյուդվիգ Երմազյանն էր, որը այս մրցույթին
մասնակցեց Jeep Wrangler մակնիշի մեքենայով՝ 24 թիմե-
րի մեջ գրավելով չորրորդ տեղը: Մնացած բոլոր մրցանա-
կային տեղերը գրավեցին Վրաստանի թիմերը:

«Jeep-Trial դասի մրցույթները դժվար փորձություն են ոչ
միայն մարդկանց, այլ նաեւ մեքենաների համար: Հաշվի
առնելով այս ամենը, կարելի է ասել, որ մեր ավտոսիրա-
հարների «հավաքականը» ցուցաբերեց մեծ վարորդություն
ինչպես մեքենաների վարման, այնպես էլ մրցույթին մաս-
նակցելու նախադրարաստական աշխատանքներում»,-
նշեց «Ադրենալին» ասոցիացիայի նախագահ Արտաշես
Ստեփանյանը:

«Սա մեր վարորդների առաջին հաջողությունն է նման
մասշտաբի միջազգային մրցույթում: Ես շատ ուրախ եմ, որ
մեր աջակցությամբ «Ադրենալին» ասոցիացիան կատարեց



ես մեկ լուրջ քայլ միջազգային ասոցիացիայում հայ մարդիկ-
ների դիրքի ամրապնդման գործում»,- նշեց «ԱրմենՏել» ՓԲԸ
գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

Նշենք, որ 2012թ.-ին «ԱրմենՏել» ՓԲԸ գլխավոր տնօրենն
ընտրվել է «Ադրենալին» երեքտեղյալ սպորտի ասոցիացիայի
դատավարի նախագահ: Jeep-Trial ավտոմոբիլային մրցում է
բնական եւ արհեստական խոշընդոտներով ճանադարիի
վրա: Այս մրցույթում կարող է անցկացվել Standart,
Extreme եւ Monster անվանակարգերում:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, դատավոր Ռ. Սարգսյանի նախագահությամբ, նախորդ օրն ավարտեց Ֆրանսիայի քաղաքացի, ազատամարտիկ Սարգիս Հացդանյանի հայցի քննությունը: Այն վարույթ էր ընդունվել անցյալ տարվա սեպտեմբերի 20-ին:

Այս գործով դատասխանող էր ճանաչվել ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունը, որը ներկայացնում էր Արմեն Հակոբյանը:

Սարգիս Հացդանյանը դատարանում էր «Օտարերկրացուին ՀՀ ուն կացության կարգավիճակ տրամադրելու մերժման վերաբերյալ» 19 07 2011թ. որոշումը և իրեն՝ հայրենիքում տալ կացության կարգավիճակ:

Ս. Հացդանյանը հայտնել էր, որ հանդիսանալով Ֆրանսիայի քաղաքացի, դեռ անցյալ տարվա հունիսի 22-ին ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն է ներկայացրել դիմում, որով խնդրել է Հայաստանում իրեն տրամադրել կացության ժամանակավոր կարգավիճակ: ՀՀ կառավարության 2008թ. թիվ 134-Ն որոշման դաժնանքների համաձայն՝ կացության կարգավիճակ ստանալու վերաբերյալ նյութերն ուղարկվել են ՀՀ ազգային անվտանգության ծառայություն՝ համաձայնեցման:

Սակայն ազգային անվտանգության ծառայությունից ստացվել է առարկության վերաբերյալ տեղեկատվություն:

Նշվածը հիմք ընդունելով՝ ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության որոշմամբ, Հացդանյանին մերժել էին, ինչը դատաճառ էր դարձել, որոշեցի նա դիմի դատարան:

Ս. Հացդանյանը գտնում էր, որ խախտվել է ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը: Խոսքն այն մասին է, որ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող որոշում է, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը

Ազգային անվտանգության ծառայության «գաղտնի» փաստաթղթով մերժվեց հայցը Հացդանյանին ասացին՝ հայրենիքից հեռացիր



վարչական մարմինն ընդունում է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով: Այն դեպքում, որովհետև լինի քաղաքացիների իրավունքների և դատականության հիմունքների սահմանում, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու:

Ըստ Ս. Հացդանյանի հակափաստարկների. «Վիզարկվող որոշումը միջամտող վարչական ակտ է, քանի որ դրանով մերժվել է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով սահմանված՝ ժամանակավոր կացության կարգավիճակ տալը»:

Ս. Հացդանյանին ի վերջո դարձել էր, թե ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունը ինչու է կայացրել նման որոշում և կարծում էր, որ

վարչական մարմինը դեպք է ոչ միայն նշի այն փաստը, որի հիման վրա կայացրել է նման որոշումը, այլ նաև որոշումը կայացնելու իրավական հիմքերը, գործին առնչվող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ հայցվոր Հացդանյանի օգտին առկա հանգամանքները: «Արդյո՞ք ես ունեմ «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով սահմանված՝ ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու իրավունք», - հարցնում է ազատամարտիկ, հայազգի Սարգիս Հացդանյանը: Ի դեպ, ՀՀ ոստիկանության վերոնշյալ վարչությունը վկայակոչել էր միայն ազգային անվտանգության ծառայության առարկությունը և «չէր բացել» դրա բովանդակությունը: Հայցվոր կողմի

համար սա էլ լուրջ խախտում է, քանի որ. «Վարչական ակտի բովանդակությունը դեպք է շարահյուսի այնպես, որոշեցի դրա հասցեատիրոջ համար ակնհայտ լինի, թե իրեն ի՞նչ իրավունք է տրամադրվում, իր ո՞ր իրավունքն է սահմանափակվում, իրեն ի՞նչ իրավունքից են զրկում կամ՝ իր վրա ինչ տարտականություն է դրվում»:

Պատասխանողն ասաց, որ դեկավարվել է ՀՀ կառավարության թիվ 134-Ն որոշմամբ հաստատված դաժնանքներով, օտարերկրացուին Ֆրանսիայի քաղաքացի Ս. Հացդանյանին, Հայաստանում ժամանակավոր կացության կարգավիճակ տալու հարցը համաձայնեցրել է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության հետ՝ գրավոր եղանակով, ազգային անվտանգության ծառայությունն ուղարկելով օտարերկրացու անձնագրի և դիմում-հարցաթերթիկի դատաճառները:

Ազգային անվտանգության ծառայությունը Ս. Հացդանյանին կացության կարգավիճակ տալու հարցի վերաբերյալ 7-օրյա ժամկետում անձնագրային և վիզաների վարչություն է ներկայացրել իր առարկության վերաբերյալ տեղեկատվություն: Պարզվեց, որ այդ փաստաթուղթը իր գաղտնիության աստիճանով դասակարգվում է «Գաղտնի» փաստաթղթերի շարքին (ի դեպ, դրա բովանդակության անհայտ մնալն անգամ հասցեատիրոջ լուրջ մտորումների տեղիք է տալիս: Այդպիսի «գաղտնի» փաստաթղթերով կարող են մտնել դատարաններ և յուրաքանչյուրի նկատմամբ դատական ակտ «մեղք բերել»):

Մինչդեռ, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի «ե» կետի համաձայն՝ օտարերկրացուին կացության կարգավիճակ տալը կարող է մերժվել, եթե գոյություն ունենա նրա կողմից Հայաստանի դատական անվտանգությանը կամ հասարակական կարգին լուրջ և հիմնավորված սպառնալիքներ: Եթե Հացդանյանի կողմից կան նման սպառնալիքներ՝ հասարակությանը իրազեկեք: Չէ՞ որ դեպքում դեմ սպառնալիք ասվածը առաջին հերթին հասարակությանը դեմ ուղղված սպառնալիք է ինչի՞նչ էիք սպասում, եթե նման բան եղել է կամ՝ կա:

Դատարանը մերժեց Սարգիս Հացդանյանի հայցը՝ փաստելով. «Տվյալ դեպքում, դատասխանողը վիճարկվող որոշման հիմքում դրել է այլ վարչական մարմնի՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական ակտերը, որոնք չեն վիճարկվում, չի հաստատվել դրանց առ ոչինչ լինելը, չեն ճանաչվել ոչ իրավաչափ՝ անվավեր, չեն կորցրել իրենց ուժը, հետևաբար յուրաքանչյուր ոք, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն, դատարանի է ելնել այն կանխավարկածից, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության գրություններն ընդունվել են ՀՀ Սահմանադրությանը կամ օրենքներով վերջինիս լիազորությունների շրջանակում, ուստի այդ գրությունները իրավաչափ վարչական ակտ են»:

Ինչ է ստասկում Սարգիս Հացդանյանին, որն 90-ականներից Հայաստանում է, Արցախում, մասնակցել է մեր ազատամարտին, բնակվում է այստեղ, կազմել է ընտանիք, ունի երեխաներ, որոնք դրոշմ են հաճախում, այս ամենով հանդերձ՝ դատաբանից ու հայրենիքի անկախացումից հետո չունի կարգավիճակ և այլևս «սպառնալիք» է Հայաստանի դատության հասարակական կարգին:

«Դատարանի կայացրած վճռով ինձ ասացին՝ հեռացիր հայրենիքից», - հուզված ասում է Սարգիս Հացդանյանը:

ՌԻԽԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Բռնաբարության փորձով արդարացում



Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ դատավոր Սուրեն Բաղդասարյանի, համազրույցում նկատմամբ բռնաբարության փորձ կատարելու և ճանադարհային, տրանսպորտային երթևեկության շահագործման կանոնները խախտելու մեջ մեղադրվող 27-ամյա Թադեոս Գեորգյանին ամբողջությամբ անձեղ ճանաչեց:

Դատարանը, սակայն, տրանսպորտային երթևեկության շահագործման կանոնները խախտելու համար ամբաստանյալի աթոռին հայտնված Գեորգյանին 1,5 տարվա ազատազրկման դատադատեց և կիրառելով համաճարման ակտը՝ ազատեց դատարանից: Դատարանը որոշում կայացրեց նաև 2 տարի ժամանակով զրկել Թադեոսին վարորդական իրավունքից:

ԱՆՈՒԾ ԲՈՒՆԱՂԱՐՅԱՆ
Վանաձոր

Միջին ծանրության է

Արտակարգ իրավիճակների նախարարությունից տեղեկացրին, որ թունավորման նախաճանգներով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երևանի Սեբաստիայի 41/1 տան բնակիչ, 1975թ. ծնված Հովհի Բաբայանը: Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը միջին ծանրության է:

Շենքի տանիքի համար համայնքապետն է մտախոգ

Փետրվարի 28-ին ահագանգ է ստացվել, որ Երևանի Բաղրամյան 66 շենքի տանիքից սահած մյուսը վնասել է քիվադատը, որի մի հատվածը կարող է ընկնել: Տեղում կատարված զննման արդյունքում դարձվել է, որ տանիքի ամբողջ երկարությամբ մոնտաժված քիվադատի մոտ 5 մետր հատվածը կախված է շենքից դուրս, մյուս հատվածը՝ մոտ 20 մ երկարությամբ, ընկած է տանիքի ծայր վրա, և հավիղ մյուս վայր ընկնելու դեպքում քիվադատը տանիքից ներքե կընկնի:

Տանիքում կուտակված ու դարբերաբար թափվող մոտ 30 սմ հաստությամբ մյուս շենքի տանիքում կհարավոր չէ քիվադատի վնասագործման աշխատանքները իրականացնել տանիքից: Դեռևս վայրում են գտնվել նաև Արաբկիր վարչական շրջանի կոմունալ ծառայության ղեկավարը:

Բագրատաշենում ազատ տնտեսական գոտին հետաձգվում է

Սեպտեմբերի 26-ին՝ Իջևանում վարչապետի հետ հանդիպման ժամանակ, Լոյսեմբերյանի համայնքների միության գործադիր տնօրեն Անդրանիկ Վերանյանը առաջադրել է Բագրատաշենում՝ Վրաստանի հետ սահմանագի, հարկային հատուկ ռեժիմ սահմանելու հարցը: Մյուս վանդ որ, այս տարի սկսվելու է սահմանային անցակետ



տերի արդիականացումը, ինչը թույլ կտա դյուրացնել սահմանով մարդկանց և աղյուսների տեղաշարժը: Անդրանիկ Վերանյանի համոզմամբ՝ Բագրատաշենում հատուկ հարկային ռեժիմը կմոտափոխվի Վրաստանի հետ Տավուշի և Լոռու մարզերի Ֆերմերների տնտեսական կադերի աշխուժացմանը, հյուսիս-արևելյան տարածաշրջանում աղյուսության նվազմանը: Վարչապետն ասել է, որ կառավարությունը այդ ծրագրի կադակցությամբ եվրոպական կառույցների հետ համագործակցում է: Տիգրան Սարգսյանի վկայությամբ՝ սակայն մտավախություն կա, որ սահմանին փոքր բիզնեսի տրվող հարկային արտոնություններից կփորձի օգտվել խոշոր բիզնեսը:

ՌՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Կերջին շրջանում թատերական բեմադրությունների կենտրոնում է խաղացանկային թատրոնի խնդիրը: Կարծիք կա, թե հանդիսատեսը կարիք ունի հարափոփոխ խաղացանկի, մինչդեռ ժետական թատրոններում ձգտում են կայուն խաղացանկի:

Այս հարցով «Առավոտը» գրույցի հրավիրեց tatron.info կայքում կազմակերպված online մրցանակաբաշխության առաջին հորիզոնականը զբաղեցնող թատերագետ, արվեստագիտության թեկնածու Արա Խզմայանին:

«Պետական թատրոնի ստացիոնար-խաղացանկային խնդիրն այսօր անենալուրջ եւ ցավոտ հարցերից է: Վաղ թե ուշ որոշ թատրոններ կանգնելու են ժետական կարգավիճակից զրկվելու հարցի առաջ: Եթե խնդիրը չհասունացավ ներկայիս նախարարի օրոք, սրվելու է կամ զուցե հանգուցալուծում ստանա ամենաճիշտ աղաքայում: Գաղտնիք չէ, որ կան թատրոններ, որոնք գեղարվեստական առումով անհեռակար վիճակում են: Նկատի ունեն դրանց մասնագիտական բացարձակ անգրագիտությունը, ժամանակի զգացողության բացակայությունը, գեղարվեստա-

Որոշ թատրոններ ընդամենը նոյաստներ են բաժանում

Ըստ թատերագետ Արա Խզմայանի, մեր ոչ հարուստ ժետական բյուջեից ժետք չէ գեղարվեստական «դիակներ» սնել:



կան նոյաստների չգոյությունը: Մինչդեռ նման թատրոնները ֆինանսավորվում են ժետության կողմից», - փաստեց Ա. Խզմայանը: Նրա ձեռնարկում, աշ-

խարիը վաղուց է հասկացել, թե ստացիոնար-խաղացանկային թատրոնները այլևս ժետական իրողություններ են, իսկ մեր ժամանակը ժետանցում է դիմաճիկ

կառույցներ, արագ կազմավորվող եւ կազմալուծվող թատերախմբեր: Կյանքն այլևս չի ընդունում խաղացանկային թատրոնների հիմնական առանձնահատկությունները, դերասանական խմբի, բեմադրիչների եւ առհասարակ ստեղծագործական անձնակազմի կայունությունը: «Խոսքս չի վերաբերում խաղացանկային թատրոնները առհասարակ վերացնելուն. մենք խոսում ենք ընդհանուր միջազգային միտումների մասին: Վերջինս վերաբերում է մասնավորապես մայրաքաղաքային թատրոններին, որովհետեւ մարզայիններին ժետական կարգավիճակից զրկելը այսօր խոհեմ չի լինի», - հայտնեց ժարոն Խզմայանը: Թատերագետը հավելեց, որ անհրաժեշտ է իրականացնել այնպիսի նախաձեռնություններ, որոնք ուղղված կլինեն մեղմելու

թատրոնների կարգավիճակի փոփոխության հնարավոր սոցիալական միտումները:

Իսկ ինչո՞ւ նման լուրջ խնդրի մասին մինչ օրս չեն խոսել ինքն ու կոլեգաները: Պարոն Խզմայանը ժարզաբանեց. «Մեզանում սուր ու ցավոտ հարցերը շրջանցելը կարծես դարձել է լուր, ներքին համաձայնության արտահայտություն: Որոշ թատրոններ ունեն ժարզապետ նոյաստաու կազմակերպության կարգավիճակ՝ սոցիալական բողոքը չսրելու համար ոլորտի մարդկանց լուեցնում են երեսունից հիսուն հազար դրամով, սփոփում կոշումներով, սրա կողքին բազմաթիվ օժտված երիտասարդներ շունեն տարրական աջակցություն եւ իրենց մասնագիտությամբ զբաղվելու հնարավորություն»: Ծարունակելով միտքը՝ ժարոն թատերագետը հայտնեց. «Մեր ոչ հարուստ ժետական բյուջեից գեղարվեստական «դիակներ» սնուցելու փոխարեն նյութական միջոցները կարելի է ուղղել անկախ երիտասարդական թատերախմբերի աջակցմանը, քանի որ այսօրվա լուրջությունը վաղվա մասնագետների գլխին, հաստատ, փոթորիկ է դառնալու»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Բրյուսովիները տոյավորված են Չինաստանով



Երեւանի Վ. Բրյուսովի անվան ժետական լեզվաբանական համալսարանի (ԵՊԼՀ) ուսանողներ Ռոբերտ Ծատուրյանը եւ Աննա Յովհաննիսյանը վերջերս են վերադարձել Չինաստանի ժողովրդական Յանգթե-տույունից: Երիտասարդները հնարավորություն էին ստացել մեկնել այդ երկիր իրենց բուհի միջոցով:

Վերջինիս ստորաբաժանումներից է Կոնֆուցիուսի ինստիտուտը, որը 2009-ին ստեղծվել է ՀՀ եւ Չինաստանի կառավարությունների միջեւ ստորագրված համաձայնագրի շրջանակներում ու միակն է տարածաշրջանում:

«Չինաստանը շատ են սիրում, դրա համար էլ որոշեցի չինարեն սովորել եւ տեղեկացա, որ հենց իմ համալսարանին կից կա Կոնֆուցիուսի ինստիտուտ: Մի քանի ամիս լեզու սովորելով՝ որոշեցի մասնակցել ամառային դորոցին եւ չինարենի որակավորման բեմություն հանձնեցի: Այդպես ստացա Չինաստան մեկնելու հնարավորություն», - ժետում է Աննան: Չնայած ուսանողները Չինաստանում անցկացրել են մեկ ամիս, բայց շատ տոյավորված են այդ արագ զարգացող գեղեցիկ եւ եկդտիկ երկրով: «Չինաստանն ասես երջանիկ հասարակության երկիր լինի: Նկատել եմ՝ այնտեղ նույնիսկ հավաքարար գոհ է իր աշխատանքից ու երջանիկ դեմքով է անում այն: Չինացիները ժոյտով էլ վերաբերվում էին մեզ՝ օտարերկրացիներին», - ասում է Ռոբերտը:

«Սկզբնական շրջանում դժվար էր հարմարվել. մեզ զգում էինք այլ մուրակում: Ուղղակի շուկային վիճակում էինք. մարդիկ ուրիշ էին, մշակույթն ու մտածելակերպը խիստ տարբեր: Բայց ամեն ինչ հետաքրքիր էր, որովհետեւ չինացիները բարեհամբուր են եւ հարազատի ժետ են ընդունում օտարերկրացիներին», - հիշում է Աննան: Ուսանողները փաստում են, որ Չինաստանում երիտասարդների համար հեշտ է կայանալը, նույնիսկ արտասահմանցիները «անի» տեղ ունեն այդ երկրում: Ռոբերտը, որ այս տարի է բանակից վերադարձել եւ հիմա ուսման ծախսերը հոգում են ծնողները, մտադիր է անաշխկայում մեկնել Չինաստան՝ բարեկեցիկ աղաքայի ակնկալիքով:

ԱՆԻ ՍՎԻՏՅԱՆ

Դեսպանի համար օրենք խախտելը տեխնիկական հարց է

Հայաստանում Իտալիայի դեսպանատունը իր հաղորդագրությունները մշտապես անգլերեն է տարածում, «մոռանալով», որ Հայաստանի Յանգթե-տույունում ժետական լեզուն հայերենն է: «Առավոտը» երեկ իտալական դեսպանատանը կայացած «Նեսադուր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցի» գրքի շնորհանդեսի ժամանակ Հայաստանում Իտալիայի դեսպան Բրունո Սկալիցինից հետաքրքրվեց՝ ինչո՞ւ դեսպանատունը չի հարգում ՀՀ «Լեզվի մասին» օրենքը: Հիշեցնենք, որ այդ օրենքի մասնավորապես 4-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Յանգթե-տույունում տարածքում գտնվող արտասահմանյան ժետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները ժարտավոր են ժետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը զուգակցել հայերենով»:

Պարոն Սկալիցին հայտարարեց, որ դա այն հարցը չէ, որի վրա արժե երկար կանգ առնել, աղա հավելեց. «Դա զուտ տեխնիկական խնդիր է: Պարզ է, որ ցանկացած երկիր ունի իր ժաշտոնական լեզուն, սակայն գոյություն ունեն նաեւ, այստեղ կոշված, փոխանցող լեզուներ, որոնք օգտագործվում են միջազգային հարաբերություններում: Բնականաբար դեսպանության համար մի փոքր դժվարություն կհարուցի ամեն հաղորդագրություն հայերենով տարածելը, որովհետեւ այդ դեմքում ամեն գրասենյակում ստիղծված կլինենք ունենալ առնվազն մեկ թարգմանիչ: Դրա համար էլ միջազգային նորմերով սահմանված կարգով օգտագործվում է տվյալ երկրում ընդունված փոխանցող լեզուն, որը անգլերենն է: Ինձ, իհարկե, հաճելի կլինեք նման դեմքերում միշտ գրել իտալերեն, բայց եթե գրելի իտալերեն, դա արդեն հարգանքի բացակայության նշան կլինեք ընթերցողի հանդեմ: Այնպես որ, մենք օգտագործում ենք ամեն տեղ ընդունված, դիվանագիտորեն եւ միջազգայնորեն ճանաչված լեզու՝ անգլերեն»:

Մեր գրույցին խառնվեց ՀՀ մշակույ-



թի փոխնախարար Արթուր Պողոսյանը ու որոշեց ժաշտոյանել դեսպանին, հայտարարելով, թե տվյալ ժարզայում Հայաստանի հանդեմ հարգանքի բացակայության մասին խոսք լինել չի կարող: Իսկ ավելի ուշ, միջանցքում փոխնախարարը արդարացավ, թե ոչ մի երկրում իտալական կառավարությունը այդքան ներդրում չի անում, որքան Հայաստանում: Բայց չէ՝ որ լեզուն գույք չէ՝ ժարտքի դիմաց:

Կառնալով «Նեսադուր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցի» հայերեն-իտալերեն կատալոգին, նշենք, որ այն ՀՀ մշակույթի նախարարության եւ Հայաստանում Իտալիայի դեսպանության համագործակցության արդյունքն է: Գիրքն առաջին անգամ ներկայացվել է անցյալ տարվա դեկտեմբերի 14-ին՝ Վենետիկում բացված «Հայաստան. քաղաքակրթության դրոշմներ» խորագրով ցուցահանդեսի շրջանակներում:

Կատալոգում գտնեղված են Նեսադուրի Սբ. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցում գտնվող 17-րդ դարի իտալացի հայտնի նկարիչ Լուկա Ձորդանոյի կողմից ստեղծված որմնանկարների լուսանկարներ: Որմնանկարների լուսանկարչական ցուցահանդեսը «Իտալերենի համաշխարհային 10-րդ շաբաթվա» շրջա-

նակներում կայացել է անցյալ տարվա հոկտեմբերին՝ Հայաստանում Իտալիայի դեսպանությունում:

Հայաստանում Իտալիայի դեսպան Բրունո Սկալիցին կարեւորեց կատալոգի լուսնըծայումը, ասելով, որ նախագիծը փոքր է չափով, բայց մենք՝ նշանակությամբ: Դեսպանը նշեց, որ թյուր է տոյավորությունը, թե Իտալիայում հայկական հետքեր տանում են միայն սուրբ Դավադ, ինքն ամեն օր հայերի մասին նոր վկայություն ու հետք է գտնում: Դրանցից մեկն էլ Նեսադուր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է, որտեղ, դեսպանի ասելով, ժախվում են սուրբ Գրիգորի մասունքները, որոնք Նեսադուր են հասել հայ մայրաթետերի շնորհիվ:

Հայ մշակույթի ու հոգետր գանձերի մասին խոսելիս ժարոն Սկալիցին ասաց, որ որոշակիորեն ծանոթ է հայ գրականությանը, մասնավորապես՝ Չարենցի ժոեգիային: Ափսոսում է, որ լեզվի չիմացության ժատեսնողով հայ հեղինակներին չի կարող բնագրով կարդալ: Նա տոյավորված է հայերի՝ մշակույթի հանդեմ հակվածությամբ: Դեսպանի ձեռակերթմանը, դա ուժի այն կենտրոնն է, որի վրա հիմնվում են հայ-իտալական հարաբերությունները:

ԳՐԴԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ



ԷԶԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

Ձիաստորտի հայ մարզիչները բարձրացնում են որակավորումը



Հայաստանի ձիաստորտի ֆեդերացիան մարզաձեւի միջազգային ֆեդերացիայի, Միջազգային օլիմպիական կոմիտեի եւ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի հետ համատեղ այսօր Չոփիկ Հայրապետյանի անվան ձիաստորտի կենտրոնում կազմակերպել է մարզիչների որակավորման բարձրացման միջազգային սեմինարը:

Մասնակցում են Հայաստանի 4 (եւս 15՝ դիտորդի կարգավիճակով), Վրաստանի՝ 2 եւ Ղազախստանի 3 մարզիչներ: Սեմինարն անցկացնում է միջազգային ֆեդերացիայի ներկայացուցիչ Ստավրոս Գեորգեյովը՝ Հունաստանից: Այս սեմինարի կազմակերպումը Հայաստանում հնարավոր է եղել անցած տարվա նոյեմբերին Ռիո դե Ժանեյրոյում կայացած միջազգային ֆեդերացիայի համաժողովում՝ Հայաստանի ձիաստորտի ֆեդերացիայի փոխնախագահ Կարեն Գիլյանի համառ ջանքերի շնորհիվ: Երկու փուլով անցկացվելիք սեմինարի (զեղավար

եւ արգելքների հաղթահարում) ավարտին, որի ընթացքում անցկացվելու են տեսական եւ գործնական տարադասուցներ, մարզիչները կստանան համադաստիսան որակավորում:

Հայաստանի ձիաստորտի ֆեդերացիայի նախագահ Չոփիկ Հայրապետյանը լրագրողներին տեղեկացրեց, որ սա ընդամենը առաջին քայլն է այդ կարեւոր գործում, եւ ֆեդերացիան ծրագրել է նմանատիպ սեմինարներ, այսուհետեւ՝ արդեն ավելի բարձր կարգի եւ ուղղվածությամբ, հաճախակի կազմակերպել Հայաստանում:

Հայաստան-Սերբիա՝ 0:2

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը երեկ Կիորոսում անցկացրեց մրցաշրջան 2012-ի առաջին հանդիպումը: Սերբիայի ընտրանու հետ ընկերական խաղում զխաղի մարզիչ Վարդան Մինասյանը խաղադաշտ եր մտցրել փորձնական կազմ՝ համարված հիմնականում երիտասարդ ֆուտբոլիստներով: Խաղն ավարտվեց սերբերի հաղթանակով՝ 2:0: Այսօր կայանալու է Հայաստանի հավաքականի երկրորդ հանդիպումը: Մրցակիցը լինելու է Կանադան:

Դանակը սրտում՝ ինքնուրույն հասել է հիվանդանոց

Խաղը մեծամարտերի (MMA) բուլղարացի ծանր քաշային Բլագոյ Իվանովը, որը հայտնի է 2008 թվականի մարտական սամբոյի աշխարհի առաջնությունում Ֆյոդոր Եմելյանցևիկոյի նկատմամբ տարած հաղթանակով, Սոֆիայի բարերից մեկում սրտի շրջանում ստացած դանակի հարվածից հետո ինքնուրույն հասել է հիվանդանոց:

Դանակը ծակել է նրա թոքը, սակայն, բարեբախտաբար, սրտին չի հասել: Ու չնայած բժիշկները վեց ժամ ջանքեր են մարզիկի կյանքը փրկելու համար, ծանրագույն վիրահատությունից հետո Իվանովի վիճակը մնում է կրիտիկական: Միջադեպը տեղի է ունեցել լուսադեմին, որից հետո Իվանովը կարողացել է դանակը սրտում՝ դուրս գալ բարից, տաքսի կանգնեցնել, ինքնուրույն հասնել հիվանդանոց: Միայն այդ ժամանակ է չեմպիոնը կորցրել գիտակցությունը:

NBA-ի աստղ Կոբի Բրայանտը համ քիթն է կոտրել, համ էլ ուղեղի ցնցում է ստացել



Բասկետբոլի «Լոս Անջելես Լեյքերս» ակումբի ռաշտման, բասկետբոլի համաշխարհային աստղ Կոբի Բրայանտը NBA-ի աստղերից կազմված թիմերի մրցադասարում կոտրել է քիթը եւ ուղեղի ցնցում ստացել:

Քթի կոտրվածքը ախտորոշվել է միայն հանդիպումից հետո հիվանդանոցում համակարգչային տոմոգրաֆիկ հետազոտությամբ: Պարզվել է նաեւ, որ Բրայանտը ուղեղի ցնցում էլ է ստացել: Իսկ թե դրանց դատաւորով բասկետբոլի գերաստղը, որն իր մարզական կարիերայի ընթացքում մասնակցել է «Արեւելքի» եւ «Արեւմուտքի» աստղերի 14 մրցաշարի, NBA-ի առաջնության հանդիպում բաց թողնելու է, թե՞ ոչ, «Լեյքերս» ակումբի ռաշտոնական կայքը լուր է:

Ա. ՀԱԿՈՐՅԱՆ

ԺԱՄԱՆՅ

Մարդու ինտելեկտը բնորոշվում է որդես նրա ճանաչողական կարողությունների ամբողջությունը, որոնք վկայում են նրա մտածողության մակարդակի եւ բարդ խնդիրները լուծելու կարողության մասին: Գոյություն ունեն ինտելեկտը ստուգող թեստեր, որոնց խնդիրն է բացահայտել, թե մտածողության որ տեսակն է առավել զարգացած տվյալ մարդու մոտ՝ լուստկերավոր, տրամաբանական, բանավոր եւ այլն, ինչպես նաեւ գնահատել նրա հիշողությունը, զարգացածության մակարդակը, ուշադրությունը: Ինտելեկտի գործունի (IQ) չափումը ձեւակվել է Հանս Էյզենքի կողմից XX դարի 40-ական թվականներին: Ինտելեկտի ստուգման առաջին թեստերը հիմնված էին այն գաղափարի վրա, որ յուրաքանչյուր տարիք ունի ինտելեկտուալ զարգացման իր նորմերը:

Ըստ Հանսի՝ ամփոփիչ թիվը, որը տրվում է ձեր կողմից IQ թեստն անցնելուց հետո, հանդիսանում է խելքի եւ կարողությունների ցուցանիշը: Որքան բարձր է IQ-ն, այնքան խելացի է այն հանձնողը: Բարձր IQ ունեցող մարդը մյուսներից ավելի մեծ շանսեր ունի կյանքում հաջողության հասնելու համար: Եթե մարդու IQ-ն բարձր է 170-ից, ապա նա հանձնար է: Ինտելեկտի գործունի հաստատում մեծություն է: Կարելի է անցնել թեստն ինտերնետում եւ իմանալ սեփական IQ-ն: Իրականում ինտերնետում տեղակայված թեստերը Էյզենքի հարցաշարի հեշտացված տարբերակներն են:

Ըստ նորգեյանացի սոցիոլոգ Ֆեյմա Ֆլինցի՝ ինտելեկտի աստիճանը մեծադեպ տալանավորված է ոչ թե գեներով, այլ շրջապատով: Այս վարկածը հաստատում են նաեւ որոշ փորձնական տվյալներ: Մասնավորապես, նկատվել է, որ միեւրոյն ընտանիքում դաստիարակված հարազատ եւ որդեգրված երեխաները խիստ մոտ արդյունքներ են գրանցում թեստավորման ժամանակ, թեւեւ նրանք ունեն տարբեր

Բարետես տղամարդիկ ավելի՞ խելացի են

IQ թեստերի վերաբերյալ կարծիքները տարբեր են



կենսաբանական ծնողներ:

IQ թեստերի վերաբերյալ մասնագետների կարծիքները տարբեր են:

Որոշ հետազոտողների կարծիքով՝ գրավիչ արտաքին ունենալը եւ տալանավորված է բարձր ինտելեկտով: Նման եզրահանգման է եկել Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի հետազոտող խումբը, ըստ որոնց, օրինակ՝ բարետես տղամարդիկ ավելի խելացի են, քան գեղեցիկ կանայք: Լոնդոնի գիտնականների ժողոված գրավիչ տղամարդկանց ինտելեկտի մակարդակը գերազանցում է նորման: Բայց

այս մասնագետները զգուշացրել են, որ ժողովը չէ իրենց հետազոտության արդյունքներն օգտագործել կոնկրետ մարդկանց գնահատելու համար, քանի որ հետազոտությունները հիմնված են վիճակագրական տվյալների վրա:

Հանս Էյզենքի ժողոված էլ՝ օրինակ, սեւամորթների IQ-ն սոխիտակամորթների IQ-ից ցածր է, ինչն էլ տալանավորված է գենետիկական կոդի առանձնահատկություններով:

Որոշ գիտնականներ էլ այն կարծիքն են, որ վերջին 50 տարիների ընթացքում

երկրի բնակիչների IQ-ն բարձրացել է:

«Առավոտի» հետ զրույցում հոգեբան Լիլիթ Սարգսյանն IQ թեստերի վերաբերյալ հետեւյալ կարծիքը հայտնեց. «Ամբողջ աշխարհում կիրառում են ինտելեկտը ստուգող IQ թեստերը թե երեխաների, թե մեծահասակների շրջանում, սակայն հիմնվել դրանց արդյունքների վրա՝ այնքան էլ ճիշտ չէ: Իհարկե, դրանց միջոցով կարելի է դարձնել, թե որքան է թեստն անցնողի ինքնագնահատականը բավական, ինչպիսին է նրա ինտելեկտը: Բայց մարդու ռեալ նկարագիրը դարձնելու համար հարկավոր է դիմել MMPI (անձի բազմակողմանի հետազոտության մեթոդիկա) թեստերի օգնությանը, ինչի շնորհիվ էլ կարելի է մոտ 90 անձնական հատկանիշ որոշել եւ կազմել մարդու հոգեբանական դիմանկարը: MMPI թեստերի միջոցով հնարավոր է դարձնել մարդու բնածին հատկանիշները, մտածողության կառուցվածքը, առանձնահատկությունները, նրա ինքնագնահատականը, հասարակության մեջ, առանձին խմբերում ադապտացվելու մակարդակը, անձի ռաշտոնական մեխանիզմները, նրա սեռական ակտիվությունը, առողջությունը, տրամաբանության չափը, հիշողությունը եւ այլն»: Ըստ մեր զրուցակցի՝ MMPI թեստերի հարցերին կեղծ դատասխաններ տալ հնարավոր չէ, որովհետեւ հաջորդ հարցերը անմիջապես կբացահայտեն ակնհայտ սուտը: Այս թեստերը նաեւ կարողանում են դարձնել՝ տվյալ մարդու ստելու ունակությունը բնածին է, թե ձեռքբերովի. «Աշխարհում շատ լուրջ գիտնականներ MMPI թեստերը համարում են անհեռախախտ, Գշտն նաեւ, որ MMPI թեստերը կիրառվում են նաեւ բժշկության մեջ. վիրահատությունից առաջ հիվանդներին առաջարկվում է թեստ անցնել, ըստ որի՝ բժիշկները կարողանում են դարձնել, թե հիվանդի խառնվածքն ինչքանով է համադաստիսանում վիրահատությանը», - եզրափակեց Լ. Սարգսյանը:

Ե. ՀԱԿՈՐՅԱՆ